

մէջ զործածած են զորդեր, զրեթէ բոլորն ալ հայկական զծածեւերով: Գորդերը հոն հասած են զլիաւորաբար առեւտուրով, սակայն նուէրներ ալ կը յիշուին: 1611ին երբ էջմիածնի Մելքիսեղեկ կաթողիկոսն զրկուած Ջաքարիա վարդապետ Պօղոս Ե Պապին ներկայացաւ ի Հոովմ, «Էտու նմա (Պապին) նամակ եւ երկու սօֆ եւ խաղի (զորդ) մի եւ փիլոնի կոճակ խաչածեւ յիսուն արմատով»⁽¹²⁾: Իցիւ թէ կարելի ըլլար Իտալիոյ զանազան քաղաքներու զիւանները ձեռնհաս կերպով եւ մանրակրկիտ պրպտել, քանի զեռ կը մնան անոնք:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Դժբախտաբար Լեհական հին ժամանակադրութիւնները, զիւանները, վաւերաթուղթերը ցարդ չեն ունումնասիրուած: Լեհահայ պատմութեան կրօնական մասէն դատ անոր մշակութային, առեւտրական եւ քաղաքային կեանքին մասին մեր ունեցած ծանօթութիւնները արդահատելի կերպով խեղճ են: Անտարակոյս հաւատադրութ, խառնակիչ Նիկոլ մը չի կազմեր Լեհահայոց փառաւոր անցեալին առանցքը, եւ սակայն անով կը սկսի եւ կը վերջանայ կարծես Լեհահայոց մասին բոլոր զիտցածնիս. մինչ անդին կ'անարկուի Լեհահայոց մասին պատմական կարեւոր վկայութեանց եւ զիւանական թուղթերու:

Անտարակոյս Անեցի հայ զաղթականներ էին որ առաջին անգամ Լեհաստան բերին Հայկական սեպարոյժ որդանը: Ծանօթացուցին մետաքսը եւ մետաքսագործութիւնը, դարդացուցին Լեհացոց կենցաղագիտութիւնը՝ բերելով արեւելեան համեմներ, պերճանքի առարկաներ, ճոխութիւն, շահարեր արուեստներ ու արհեստներ:

Որոշ կը հաստատուի որ Հայերն էին որ Լեհաստանի մէջ զորդի առեւտուրով կը զբաղէին, անոնք էին որ զայն ներկայացուցին Լեհացոց: Անոնք Լվով կը բերէին «թանկարժէք զորդեր եւ հիւսուածեղէններ»: Դարձեալ «Լվովի եւ արեւելեան Լեհաստանի սահմանակից քաղաքներուն մէջ հաստատուած հայերը կը զբաղէին վաճառականութեամբ եւ առեւտուրով՝ Լեհաստանի եւ արեւելեան երկիրներու միջեւ: Թուրքիայէն, Սիւրիայէն, Արարիայէն, Եգիպտոսէն, նոյնիսկ Հնդկաստանէն աղբանք բերել կու տային: Արեւելեան բոլոր թանկագին վաճառքները իրենց ձեռքէն կ'անցնէին: Գորգ, հիւսուածեղէն»⁽¹³⁾, եւ այլն:

Լեհացի բանաստեղծ մը, Սերաստիէն Քլոնովիչ, Հայոց մասին կը գրէ.

(12) Ուղեգրութիւն Սիմոն զպիր Լեհացոյ: «Հանդ. Ամս.», 1933, էջ 481:

(13) Լեհաստանի Հայերը: - Պրոնիսլովա Քէօրբուլեան. - «Սիւն», 1934, Յուլիս, էջ 213-14: